ՊԱՇՏՕՆԱԿԱՆՔ

ՀԵՌԱԳԻՐՆԵՐ

ՆՈՐԻՆ ԿԱՅՍԵՐԱԿԱՆ ՄԵԾՈՒԹԵԱՆ ՕԳՈՍՏԱՓԱՌ ԹԱԳԱՒՈՐ ԿԱՅՍԵՐ ԾՆՆԴԵԱՆ ԵՒ ԳԱՀԱԿԱԼՈՒԹԵԱՆ *մեծահանդէս աւուրց առթիւ Ամենապատիւ Տէր Տեղակալը հեռագիրներով յանուն ներքին Գործոց Նախարարին Հայ Հոգևորականութեան և Էջմիածնի Միաբանութեան կողմից շնորհաւորեց այդ մեծահանդէս տօները, յայտնելով ամենահաւատարիմ հպատակութեան ջերմ զգացմունքներ։*

Կովկասեան կառավարչապետի կրկին գրութիւններից երևում է, որ ԹԱԳԱՒՈՐ ԿԱՅՍՐԸ *լսելով ներքին Գործոց Նախարարի ամենահպատակօրէն զեկուցումը այդ հեռագիրների մասին՝ Ամենաողորմածաբար բարեհաճեց հրամայել.* «ՇՆՈՐՀԱԿԱԼՈՒԹԻՒՆ ՅԱՅՏՆԵԼ, ՀԱՅ ՀՈԳԵՒՈՐԱԿԱՆՈՒԹԵԱՆԸ, ՇՆՈՐՀԱԿԱԼՈՒԹԻՒՆ ՅԱՅՏՆԵԼ, ԷՋՄԻԱԾՆԻ ՄԻԱԲԱՆՈՒԹԵԱՆԸ»։

ՔԱՂՈՒԱԾՔ ՍԻՆՕԴԻ ՕՐԱԳՐՈՒԹԻՒՆՆԵՐԻՑ.

11 *ապրիլի*, 1892. *ըստ հրամանի* ՆՈՐԻՆ ԿԱՅՍԵՐԱԿԱՆ ՄԵԾՈՒԹԵԱՆ ԻՆՔՆԱԿԱԼԻՆ *ամենայն Ռուսաց Սուրբ Էջմիածնի Հայոց Լուսաւորչական Սինոդում լսեցին. Նախ՝ Վրաստանի և Իմէրէթի Հայոց թեմի ծխական 42 պատգամաւորների բոլոքագիրը յանուն նոյն թեմի Գեր. Առաջնորդին և յանուն Սինոդիս, ան-*

ցեալ մարտի 8-ին, որի մէջ գրուած է. «Նկատելով, որ Հալաբարի ս. Լուսաւորչի և Էջմիածնեցւոց եկեղեցիների փետրուար 2-ի ընտրութեանց, որպէս նաև Կումիսի գործակալութեան առաջին ընտրութեան պատգամաւորները չեն ընդունուած Ներդ. Սրբազնութեան կողմից այսօրուայ պատգամաւորական ընտրութեանը մասնակցելու համար, այն ընտրութիւնները բեկուած լինելով Ներդ. Սրբազնութեան կողմից և վերընտրութիւններ նշանակուած լինելով։ Նկատելով, որ մինչ մէկ կողմից այդ պատգամաւորները բողոքել են Բարձրագոյն Ատենին՝ Ս. Սինոդին՝ իրենց ընտրութիւնների բեկման դէմ, միւս կողմից Ներդ. Սրբազնութիւնը վերընտրութիւններ է կատարել տուել հակառակ Ս. Սինոդի կարգադրութեան, որ պահանջել էր վերընտրութիւններ չը կատարել, այլ նախ՝ առաջին ընտրութիւնների բեկման պատճառները և վերաբերեալ գրաւոր փաստերը առաջարկել Ս. Սինոդի քննութեանը և սպասել նորա վճռին։ Նկատելով, որ Բարձրագոյն Ատենի այդ կարգադրութիւնը անտեսութեան մատնելով Ներդ. Սրբազնութիւնը վերընտրութիւններ է կատարել տուել Էջմիածնեցւոց եկեղեցում՝ և Կումիսի գործակալութեան մէջ, զրկելով նախկին պատգամաւորներին և նոցա ընտրող բազմաթիւ ընտրողներին իրենց իրաւունքներից։ Նկատելով, որ Ներդ. Սրբազնութիւնը հեռացրել է ընտրութեան գործից ս. Լուսաւորչի եկեղեցին, մերժելով նորա ներկայացուցիչ պատգամաւորներին։ Նկատելով, որ Էջմիածնեցւոց եկեղեցու և Կումիսի գործակալութեան առաջին ընտրութիւնների պատգամաւորների փոխանակ՝ Բարձրագոյն Իշխանութեան կարգադրութեան հակառակ կատարուած վերընտրութեան ներկայացուցիչներն են ընդունուած ի մասնակցութիւն թեմական պատգամաւորի ընտրութեան։ Նկատելով վերջապէս իբր ամփոփումն այս բոլորի, որ ներկայ ժողովը անկատար է իւր բաղկացուցիչ մասունքների կողմից և անկանոն է՝ հակառակ Ս. Սինոդի կարգադրութեան մասունքներ գտնուելով իւր մէջ։ Անկանոն և անկատար ենք համարում այսպիսի մի ժողով հրաժարուում ենք նորան մասնակցելուց և թողնում հեռանում ենք ժողովարանից, բողոքե-

լով որ և է ընտրութեան դէմ։ եթէ նա այսօր կամ երբ և իցէ տեղի ունենայ առանց օրինաւորութեան, իրաւականութեան և արդարութեան բոլոր հանգամանքները ներկայացնելու, և միանգամայն յայտնելով Զերդ Սրբազնութեանը, որ այս բողոքագրի պատճէնն ուղարկումենք Էջմիածնի Ս. Սինոդին, որի կարգադրութեան և կոպասենք»։ Երկրորդ՝ լսեցին Հալլաբարի Էջմիածնեցոց ս. Գէորգ եկեղեցու ծխական պատգամաւորների բողոքագիրը՝ Ծայրագոյն Հոգևոր Իշխանութեան առաջադրութեան հակառակ փետրուարի 23-ին նշանակուած պատգամաւորների անկանոն վերընտրութեան դէմ և թեմական պատգամաւորի ընտրութեանը մասնակցելու իրաւունքից իրենց զրկուած լինելու դէմ։ Երրորդ՝ լսեցին Հալլաբարի ս. Լուսաւորիչ եկեղեցու ծխական պատգամաւորների բողոքագիրը՝ նոյն եկեղեցու ծխականներին թեմական պատգամաւորի ընտրութեան մասնակցելու օրինական իրաւունքներից զրկուելուն դէմ։ Չորրորդ՝ լսեցին Նիկողայոս Տէր-Ղևոնդեանցի և Լևոն Ղորղանեանցի բողոքը այն բանի դէմ։ որ Սրբազան Առաջնորդը Կումիսի գործակալութեան ժողովրդի ծխական երեսփոխանների առաջին ընտրութիւնը անվաւեր է համարել և վերընտրութիւն է նշանակել հակառակ Ծայրագոյն Հոգևոր Իշխանութեան առաջադրութեան, որով զրկուել են իրենք թեմական պատգամաւորի ընտրութեան մասնակցութիւնից։ Տէր-Ղևոնդ. Նախ. Թիֆլիզի ժողովուրդներից 270 անձանց փետրուարի 12-ին քաշած հեռագիրը, որով բողոքումէին Գեր. Առաջնորդից՝ ս. Լուսաւորիչ, Էջմիածնեցոց ս. Գէորգ եկեղեցիների և Կումիսի գործակալութեան նոյն ամսի 2-ին կանոնաւորապէս կատարուած ընտրութիւնները անվաւեր համարելուն համար և խնդրումէին պաշտպանել ժողովրդեան իրաւունքները, Ամենապատիւ Տէր Տեղակալից Սինոդին յանձնուելուց յետոյ՝ հեռագրուեց Գեր. Առաջնորդին, նոյն ամսի 14-ին, դադարեցնել կատարուած ընտրութիւնները անվաւեր համարելու իւր անօրինութիւնը և նոր ընտրութիւններ նշանակելը, առաքելով Սինոդս նոյն իսկ առաջին փոստով իրեն մատուցուած բողոքները ընտրութեանց կանոնաւորութեան կամ

անկանոնութեանց վերաբերութեամբ, առաքել նաև ընտրութեանց թերթերը, որոնց վրայ ստորագրել են նախագահող քահանաները, այլ և մի օրինակ ընտրութեանց համար իւր տուած Հրահանգից, և սպասել վախճանական տնօրինութեան Սինոդիս։ Սակայն Նորին Սրբազնութիւնը անունկնդիր լինելով Սինոդիս այս առաջադրութեանը՝ նշանակեց դարձեալ վերընտրութիւններ, որոնց պատճառով մնան Սինոդս բողոքներ՝ ս. Լուսաւորիչ եկեղեցու ծխական պատգամաւոր՝ Աղասի Մելիք-Այվազեանից, Գաբրիէլ Իշխանեանցից և Սարգիս Մանուէլեանցից, Կումիսի գործակալութեան պատգամաւոր՝ Նիկողայոս Տէր Ղևոնդեանցից և Լևոն Ղորղանեանցից։—Վերընտրութիւնները նշանակելուց յետոյ Նորին Գերապատուութիւնը՝ փետրուարի 19-ին ընդ համարաւ 43՝ ծանոյց Սինոդիս, թէ ուղարկում է պահանջուած թղթերը, աւելացնելով՝ թէ վերոյիշեալ ընտրութիւնները անվաւեր է համարել, որովհետև այդ ընտրութեանց մասնակցել են մի քանի ոչ-ծխականներ, մի քանի ոչ-չափահասներ, մի քանիսը անբարեմիտների պատրանքով և խաբէութեամբը կամ «բռնի իմն եղանակով մասնակցել են ընտրութեանը հակառակ իրաւունքի և իւր Հրահանգի» և թէ՝ «քաջի սրանցից, բազմաթիւ անբարեմիտ, անչափահաս ժողովուրդներ այլ և այլ եկեղեցիներից խումբ խումբ ժողովուելով ս. Լուսաւորիչ և Էջմիածնեցւոց եկեղեցիների գաւիթներում գործ են դրել սեպհական ծխականների վրայ բռնութիւն և ճնշումն, մի քանիսին վախեցնելով, միւսներին խաբելով, մի քանիսին կաշառելով հեռացրել են այն ընտրութեանց մասնակցութիւնից»։ Երկրորդ՝ ստանալով թեմական պատգամաւորի ընտրութեանը մասնակցելուց հեռացած ծխական պատգամաւորների բողոքագիրը, այլ և ս. Լուսաւորիչ, Էջմիածնեցոց ս. Գէորգ և Կումիսի գործակալութեան առաջին ընտրութեանց ծխակ. պատգամաւորների բողոքագիրը՝ Սինոդս մարտի 14-ին պահանջեց Սրբ. Առաջնորդից վերոյիշեալ երկու եկեղեցիների և գործակալութեան առաջին և վերջին ընտրութեանց ծխականների թերթերը, նաև թեմական պատգամաւորի ընտրութեան թերթը և դրանց վերաբերեալ բոլոր

թղթերը և իւր՝ Առաջնորդի՝ բացատրութիւնը։ Սրանից յետոյ Նորին Գերապատուութիւնը յայտարարութեամբ՝ ամսի 17-ին թ. 61, ուղարկում է պահանջուած թղթերը, Բոյն Ս. Լուսաւորչի և Էջմիածնեցոց եկեղեցիների սուրբ-ընծայ ընդունելոց, որոնք յիշատակում են առաջին յայտարարութեան մէջ իբրև ուղարկուած, բայց անյայտ պատճառով մինչև մարտի 14-ը չեն հասել ընդունելի մէջ, և աւելացնում է (Ս. Առաջնորդը) իւր բացատրութիւնը յիշեալ երկու եկեղեցիների մասնաւոր (ծխական) ընտրութեանց և թեմական պատգամաւորի ընտրութեան վերաբերեալ։ Իսկ երբ բացատրում է թէ ինչի՞ չը կատարուեց Ս. Լուսաւորիչ եկեղեցու երկրորդ ընտրութիւնը, ասում է. «Երկրորդ անգամ ս. Լուսաւորիչ եկեղեցում չէ կայացել ընտրութիւնը՝ ենիչերական Մշակական խմբի ազգի ազգի մեքենայագործութեանց պատճառով, որ ժողովուելով այդ ընտրութիւնը խափանելու համար չէ խնայել գործ դնել ամենատեսակ աններելի միջոցներ, ինչպէս են՝ բռնութիւն, երկիւղ, խաբէութիւն, գրամ և շինծու հեռագիրներ, որոնք իբրև թէ եկած են եղել Մինոգիդ կողմից այդ ընտրութիւնը խափանելու համար։ Այդպիսի խայտառակութիւններ ջանացել է գործ դնել մի ուրիշ Մշակական խումբ և Էջմիածնեցոց եկեղեցու ընտրութեան ժամանակ, բայց այսուամենայնիւ չեն յաջողել իսպառ խափանել ընտրութիւնը»։ Սակայն Էջմիածնեցոց եկեղեցու ընտրողական և վերընտրողական թերթերից, ս. Լուսաւորիչ եկեղեցու ընտրողական թերթից, և այս ընտրութեանց վերաբերեալ միւս բոլոր թղթերի վերահասութիւնից երևում է, որ առաջին ընտրութիւնները եղել են միանգամայն կանոնաւոր և ընդհակառակն՝ կեղծիք և մեքենայութիւններ ձեռք են առնուել նոյն այդ առաջին ընտրութիւնները խանգարելու համար։ Այսպէս՝ օրինակ. ա) Էջմիածնեցոց ս. Գէորգ եկեղեցում առաջին ընտրութիւնը կատարուել է մասնակցութեամբ 153 ծխականների, նախագահութեամբ Ներսէս Աւագ քահանայ Աբովեանցի։ Թեմական Առաջնորդի հրամանին համաձայն նախագահող քահանաների պարտքն են. յօդ. 3. «Իւրաքանչիւր նախագահ ստանալով թեմական

Առաջնորդից այս մասին առաջադրութիւն, պարտաւոր է անմիջապէս պահանջել իրան յանձնուած եկեղեցու աւագ և միաբան քահանաներից այն ծխականների ցուցակը, որոնք ընտրութեան մասնակցելու իրաւունք ունին»։ Յօդ. 4. «Ցուցակներն ստանալուց և ճշտելուց յետոյ նախագահը պիտի պահպանէ իրան մօտ մինչև ընտրութեան օրը, որպէս զի համեմատէ ժողովին ներկայ եղող ծխականների հետ»։ Յօդ. 8. «Ընտրութիւնից առաջ նախագահը ծխատէր քահանաների ներկայութեամբ պիտի ստուգէ ցուցակների համեմատ ժողովին ներկայ գտնուողներին, և նրանց, որոնք ցուցակների մէջ չեն մտած, կարգադրէ հեռացնել ժողովից»։—Եթէ Ներսէս աւագ քահանայ Աբովեանցը պահել է իւր իշխանութեան այս պատուէրները, ուրեմն ընտրութիւնն ինքն ըստ ինքեան կանոնաւոր է, իսկ եթէ չէ պահել, արժանի էր պատժի, առաջագոյն քննելով և ստուգելով նորա զանցառութեան չափը։ Ընտրութիւնից յետոյ 54 անձինք մի բողոք են մատուցել Թեմական Առաջնորդին՝ թէ ընտրութեանը մասնակցել են ոչ-ծխականներ և անչափահասներ, առանց յիշելու նրանց անունները, և ահա առանց պահանջելու նախագահ քահանայից բացատրութիւն, առանց ստուգելու ցուցակներից և ծննդական վկայականներից, ընտրութիւնն անվաւեր է հրատարակւում և նշանակւում է վերընտրութիւն, մինչդեռ ոչ մի իշխանութիւն և ոչ մի հաստատութիւն չէ կարող տնօրինել կամ վճիռ տալ, առանց կանխաւ քննելու գործը։ Այդ բողոքագրում ստորագրել են և այնպիսի անձինք, որոնք ստորագրել են ընտրութեան արձանագրութեան մէջ առանց բողոքելու։ Այդ կրկնակի հակասական ստորագրութիւն ունեցողները սրանք են.— Ստեփան Ալաւերդեան, Գալուստ Մնացականեանց, Լևոն Վարդանեան, Թադէոս Վարդանեան։ Վերջինիս անգրագիտութեան պատճառով ընտրողական թերթում նրա խնդրանքով ստորագրել է Թադէոս Մատինեանց, իսկ բողոքագրում նրա անունը գրուած է իբրև գրագիտի անուն։ Փետրուարի 23-ին եղել է վերընտրութիւն մասնակցութեամբ 20 ծխականների, մինչդեռ 100 ծխականներ բողոքել են Առաջնորդին ընդդէմ վերընտրութեան։

Բացայայտ է թէ 20 անձինք չեն կարող լինել մի եկեղեցու հարիւրաւոր ծխերի ներկայացուցիչ, բայց որպէս զի այդպիսի ընտրութեանը օրինաւորութեան ձև տրուի և բողոքողների իրաւունքը նուազեցուցուի՝ մատուցանւում է Առաջնորդին, մարտի 1-ին, խնդիր մի քանիսից, այն մտքով թէ իրենք իբրև ծխականներ չը կարողացան մասնակցել վերընտրութեանը, որովհետև եկեղեցու բագում ահագին աղմուկի հանդիպելով մնացինք շուարած, և մեզ հեռագիր կարդալով հաւատացրին՝ որ ընտրութիւնը այդ օրը կայանալու չէ, այդ իմանալով մենք ցրուեցանք», բայց հաճ և հաւան են քսանի կատարած ընտրութեանը: Եւ այդ ՅՐՈՒՑՆԵՐԻ մէջում կան այնպիսիները, որոնք ՏՈՒՆԱԿՑԵԼ ԵՆ վերընտրութեանը: Սրանցից մինն է Միքայէլ Մելքումեանցը, որ ստորագրել է և վերընտրութեան թերթում և 100 ծխականների ընդդէմ վերընտրութեան բողոքագրի թերթում և եկեղեցու գաւթից ցրուածների թերթում, բայց գրչի մէջ մեծ դանազանութիւն կայ: Միւս անձը, որ ստորագրել է ցրուածների թերթում է Թաթոս Վարդանեանը, որ ՏՈՒՆԱԿՑԵԼ է նաև վերընտրութեանը: Մի ուրիշը՝ «Գեւորք Ենգիբարեանց», նշանակուած է ընդդէմ առաջին ընտրութեան բողոքի թերթում իբրև անգրագէտ, ըստ խնդրանաց որի ստորագրել է Տիգրան Զմշկեանց, այն ինչ նոյն անձը յանուն Առաջնորդի խնդրագրում 24-ին փետրուարի երևումէ ստորագրած իբրև գրագէտ՝ «Գեորք Ենգիբարեան»: Վերընտրութեանը մասնակցողներից մէկն է ոմն Մովսէս Արութինով, և սա նոյն խնդրագրում ստորագրել է թէ՝ «աղմուկի հանդիպելով ցրուեցանք»: Իսկ մի ուրիշը, առաջին ընտրութեան թերթում ստորագրողներից՝ Լևոն Վարդանեանց, ստորագրել է և 51 անձանց ընդդէմ այդ ընտրութեան խնդրում և 100 անձանց բողոքագրին ընդդէմ վերընտրութեան: Բ.) ա. Լուսաւորիչ եկեղեցու ընտրութիւնը կատարուել է նմանապէս թեմական Առաջնորդի հրահանգի համաձայն և նախագահութեամբ Աշոտ քահանայի, որը ստորագրել է թերթին, առանց անվաւեր համարելու ընտրութիւնը: Ցեռոյ՝ նոյն օրը մատուցւում է Առաջնորդին մի արձանագրու-

թիւն, ընարութիւնը անվաւեր համարելու համար, որովհետև ասում են թէ՝ մասնակցել են «ոչ-ծիսականներ և ոչ-չափահասներ»։ Այս արձանագրութիւնը կիսով չափ գրուած է մի գրչով և կիսով չափ ուրիշ ձեռքով և դրա մէջ ստորագրել են այնպիսի անձինք, որոնք հասնում էին ընտրութեանը և ստորագրել են ընտրողական թերթը առանց բողոքելու։ Այդ անձինքն են.—Գէորգ Յարութիւնեանց, Եագոր Մելիքեանց, Բագրատ Տէր-Յարութիւնեանց, Գէորգ Տէր-Մարտիրոսեան, Գէորգ Բէկնազարեանց, Սարգիս Ղազարեանց, Արտեմ Ասլամազով»։

Վերոգրեալ հանգամանքները լսելուց յետոյ Սինոդի Ատենապետի Տէր Տեղակալը յանձնեց Ատենիս երկու նամակ, որոնցից մէկը գրուած է Գերապատիւ Մամբրէ եպիսկոպոսի (Թիֆ. Առաջ.) իսկական ձեռքով և ստորագրութեամբ, այս տարուայ փետրուարի 6-ին։ Այդ նամակն է հետևեալը. «Բարեկրօն Տէր Յովհաննէս. այս մասնաւոր նամակովս յանձնարարում եմ Ձեզ, որ երկու երեցփոխանների ընտրութիւնը Ձեր գործակալութեան և Արգուինի շուտով կատարել տաք և աշխատէք այնպիսիները չընտրուին Մշակի կուսակիցներից, որոնք ուզում են քանդել միանգամից Հայաստանեայցս Ս. եկեղեցին, այլ այնպիսի անձինք, որոնք ճշմարիտ հայ են, յարգում ու սիրում են իրենց եկեղեցին։ Եթէ այդտեղ այնպիսի անձինք չգտանին, որ կարողանան ժամանակին Տփխիս գան ճանապարհի հեռաւորութեան ու դժուարութեան համար, կարող էք այստեղից Տփխիսից ընտրել այնպիսիքը։ Եւ կարելի է ընտրել տալ Պ. Սպանդար Սպանդարեանցին (Նոր—Դարի խմբագիր), Պ. Վարդանեան Փիլիպպոսին (Տեսուչ Յովհաննեան Մարիամեան օրիորդական ուսումնարանին), կամ ստատսկի սովետնիկ Գասպար Նահապետեանցին։ Որոնք մեր ս. եկեղեցւոյն և ազգի օգուտը պաշտպանող անձնաւորներ անձինք են»։—Իսկ միւս նամակը գրուած է Գիւտ քահանայ Աղանեանցից, նոյն ամսի 14-ին, որ ունի այս օրինակը. «Յոյժ հարգելի՛ Տէր Նիկողայոս հայր. ուղարկելով Ձեզ մի ընտրութեան թերթ գրած Ռ Ա Ն Ն Յ Ա Ն Ի ինչպէս որ երէկ կայացաւ հրապարակով ընտրութիւնը, առաջարկում եմ իսկոյն մի մարդ վարձելով բոլոր

գիւղերը շրջեցնելով սաղրագրել տաս և բոլոր տանուտէրների կնիքներով վաւերացնել տաս, «ԸՍՎՀԵՍԼ ՄԷ ԽԱՆԷՍԸ ՎԱՐԵՐԱՑՈՒՆ ՔԱՆՈՒՍՏԷՐԷ ՅԵՐԱՎ»։ Սաղրագրութեան յանը լինի այսպէս։ Վաշլօվանի պատգամաւոր—այս ինչ (անունը և ազգը)։ Բորբալայի պատգամաւոր—այս ինչ։ Իրդիսի պատգամաւոր—այս ինչ։ Սոցա սաղրագրութիւնը վաւերացնում եմ տանուտէր այս ինչ (կնիք)։ Կօգայի պատգամաւոր—այս ինչ։ Մուխաթի պատգամաւոր—այս ինչ։ Սոցա սաղրագրութիւնը վաւերացնում եմ (կնիք)։ Կումիսու պատգամաւոր—այս ինչ։ Սոցա սաղրագրութիւնը վաւերացնում եմ (կնիք)։ Թէլէթի պատգամաւոր, Սողանլուխի պատգամաւոր, փոքր Թէլէթի պատգամաւոր և այլն։ Թերթի փոխելու պատճառն այն է, որ սաղրագրութիւնները խառն ի խուռն են և Ձեր արած մի փոքր սխալը, որ ասացիք թէ միայն տանուտէրները վաւերացնեն հերիք է, այն ինչ անպատճառ ամենքը պէտք է սաղրագրեն։ Այս գործը պէտք է վերջանայ կիւրակի օրը և երկուշաբթի առաւօտ պիտի ստանամ Ձեզանից, որ ներկայացնեմ ուր հարկն է։ Անպատճառ պէտք է «ԱՊՈՐՔԷԼ ԳԱՍ» և Ծղնէթի, Լիսի, Դեղումի և Ծաւկիսի պատգամաւորներին»։

Առնելով ի նկատի, որ Սրբազան Առաջնորդը Ս. Լուսաւորիչ եկեղեցու երկրորդ ընտրութեան չկայանալուն համար մեղադիր էր լինում ուրիշներին, անուանելով նորանց ենիչերական Մշակական խումբ և այլն, արդէն իւր վերոգրեալ նամակով ապացուցանում է՝ թէ ինքը գործ է դրել ամեն տեսակ անհերելի միջոցներ և խափանել է առաջին՝ կանոնաւոր եղանակով կատարուած՝ ընտրութիւնները,—ընտրութիւնները, որ կատարուել են ընտրող ժողովրդի կամքի և ոչ թէ իւր՝ Առաջնորդի՝ հաճոյից համաձայն,—և բռնանալով ժողովրդի ազատ իրաւունքների վրայ տեղի է տուել խռովութիւնների և բողոքների, մինչդեռ պէտք էր, որ ինքը, ինչպէս Առաջնորդ, ըստ սրամադրութեան Օրինաց, հսկէր միայն կանոնաւոր ընտրութեանը և չդեկավարուէր կուսակցական ոգով, մանաւանդ որ անհերելի և անվայել է՝ այս ինչ անձին եկեղեցու թշնամի և այն ինչին պաշտպան անուանելով մեղանչել ընդդէմ իւր Սրբազան կոչման և

աստիճանի բարձրութեան։ Նկատելով՝ որ Առաջնորդը մի և նոյն անձնական կրքով և կողմնասիրութեամբ ջանացել է ազգի ազգի հնարներով խախտել, խափանել ս. Լուսաւորիչ և Էջմիածնեցոց ս. Գէորգ եկեղեցիների առաջին ընտրութիւնները, մինչդեռ այդ երկու ընտրութիւնն էս միանգամայն կանոնաւոր են։ Իսկ Կումիսի գործակալութեան առաջին ընտրութիւնը թէպէտ և կարելի էր բեկանել՝ նախագահող քահանայի մասնաւոր զանցառութիւնների պատճառով, բայց որովհետև աւելի ծանրագոյն են այն անկանոնութիւններն ու զեղծմունքները, որ գործ է դրել Գիւտ քահանան, ինչպէս այդ երևում է նրա արած քննութիւնից և նրա նամակից, որ մէջ բերուեց վերևում ուստի ՀՐԱՄԱՅԵՑԻՆ. Նախ՝ Վրաստանի և Իմերեթի Հայոց թեմի պատգամաւորի ընտրութիւնը, որ կատարուել է անցեալ մարտի 8-ին, գտնելով անկանոն և անվաւեր, ս. Լուսաւորիչ և ս. Գէորգ եկեղեցիների և Կումիսի գործակալութեան օրինաւոր ներկայացուցիչների այդ ընտրութեանը չը մասնակցելուն պատճառով, նշանակել նոր ընտրութիւն այս ամսի 22-ին, որի մասին յայտնել նոյն թեմի ժողովրդեան երեսփոխաններին Հոգևոր Ատեանների և Գործակալների ձեռքով, հրաւիրելով նրանց նշանակուած օրը մասնակցելու նոր ընտրութեանը։ Երկրորդ՝ այդ նոյն ընտրութեանը հրաւիրել մասնակցելու Ս. Լուսաւորիչ և Էջմիածնեցոց ս. Գէորգ եկեղեցիների և Կումիսի գործակալութեան առաջին կանոնաւոր ընտրութեամբ ընտրուած ներկայացուցիչներին, այն է՝ Աղասի Մելիք-Այվազեանցին, Գաբրիէլ Իշխանեանցին, Սարգիս Մանուէլեանցին, բժիշկ Եփրեմ Աղամալեանցին, Կարապետ Ղազանչեանցին, Ստեփան Ծատուրեանցին, Նիկողայոս Տէր-Ղևոնդեանցին և Լևոն Ղորղանեանցին։ Երրորդ՝ Որովհետև թեմի Սրբազան Առաջնորդը, իբրև ներկայացուցիչ Հոգևոր Իշխանութեան, չը կարողանալով մնալ իւր կոչման բարձրութեան վրայ, ապօրինի և օրինազանց ընթացքով տեղի է տուել իրաւացի բողոքների և հետևաբար՝ ընտրութեան բեկման. ուստի նոր ընտրութեանը նախագահ կարգել Սինոդիս Անդամ՝ Դերապատիւ Գրիգորիս եպիս-

կոպոս Աղուանեանցին։ Իսկ Գերապատիւ Մամբրէ եպիսկոպոսի այսպիսի ընթացքի և արարմունքների համար խնդրել Ամենապատիւ Տէր Տեղակալի առանձին ուշադրութիւնը։ Եւ չորրորդ՝ յայտնելով Տփխիսի պ. Նահանգապետին նոր ընտրութեան օրը, խնդրել նրա անօրինութիւնը նոյն ժողովին իւր ներկայացուցիչը ուղարկելու համար։

(Ստորագրութիւնք բոլոր Անդամների).

Տեղակալ Ատենապետի Սինոդի՝
ԵՐԵՄԻԱ ԵՊԻՍԿՈՊՈՍ.

Անդամք՝ Գրիգորիս եպիսկոպոս,
Արիստակէս եպիս. (Սեդրակեան),
Սարգիս եպիսկոպոս,
Արիստակէս եպիս. (Դաւթեան),
Ներսէս վարդապետ։

(Սրբազան Սարգիս և Արիստակէս Դաւթեան եպիսկոպոսների ստորագրութեանցն հետևում է «Մնամ ի կարծիս» յաւելուածը։ Իսկ օրագրին կցուած «Կարծեաց» վերջում Սինոդի տուած վճռագատութիւնից երևում է, որ այդ «Կարծիքը» պէտք է համարել միմիայն Գեր. Արիստակէս եպիսկոպոս Դաւթեանինը)։

1892 ամի փետրուարի 28-ին. ըստ Հրամանի ՆՈՐԻՆ ԿԱՅՍԵՐԱԿԱՆ ՄԵԾՈՒԹԵԱՆ ԻՆԲՆԱԿԱԼԻՆ ամենայն Ռուսաց Ս. Էջմիածնի Հայոց Լուսաւորչական Սինոդում լսեցին զեկուցում. 1891 ամի յուլիսի 31-ին լսելով Սինոդումն Բեսսարաբիայի վիճակի հոգևոր գործերի կառավարչի յայտարարութիւնը (19 յունիս, թ. 57), որով թոյլ է տրուում Ագքիրմանցի պահեստի զօրքի պորուչիկ Մկրտիչ Երամեանցի պսակը Եղիսաբեթ Սիմէոնեանի հետ աղգականութեան հինգերորդ աստիճանում, հետևեալ պատճառով. «որովհետև Բեսսարաբիայի վիճակում հայ ազգի թիւը շատ քիչ է, շատ և շատ անհրաժեշտ է զիջանել այդ թեմի կառավարչի խնդրքին, օրինակ առնելով հոգե-

լոյս տէր Մակար Հայրապետի տնօրինութիւնը Յովհաննէս Սարգիսեանի՝ օրիորդ Եւգինէի հետ պսակուելու թոյլտուութեան վերաբերութեամբ, որ հինգերորդ աստիճանի ազգականութիւն է և որի մասին Սինոդը անչեալ տարուայ օգոստոսի 30-ին հրաման է տուել Կոնսիստորիային թ. 3202, ուստի պատուիրել նոյն Կոնսիստորիային թոյլ տալ վերոյիշեալ խօսեցեալների պսակը, ոչ յօրինակ այլոց, յարգելով վերոյիշուած հանգամանքները նրանց կեանքի վերաբերութեամբ, որ չմնան մեղքում, գայթակղեցնեն շատերին և դատապարտուին»։ Այս օրագիրը ստորագրում են Ամենապատիւ տէր Տեղակալը և գերապատիւ անդամներ՝ Սուքիաս Ներսէս և Սարգիս եպիսկոպոսները, իսկ Արիստակէս Դաւթեան սրբազան եպիսկոպոսը ձեռնպահ է մնում, չտալով օրինաստման կարգով իւր կարծիքը. յետոյ արձակւում է օրագիրը Պրոկուրորի պաշտօնակատարից։ Մի քանի օրից յետոյ այդ պսակի հրամանը յանուն կոնսիստորիային Հայոց Բեսարաբիոյ գրւում է Ամենում ստորագրուելու համար, բայց սրբազան Սուքիաս եպիսկոպոսը պատասխանում է այդ հրամանը օրագրի սեւագրութեան հետ միասին և պահանջում է դատաստանական մասին գործավար՝ Բենիամին տէր Գրիգորեանից իսկական օրագիրը և տալիս է Սրբազան Սարգիս եպիսկոպոսին, որն և առնելով գրիչը ջնջում է իւր ստորագրութիւնը այդ օրագրի մէջ։ Այս լսելով Ամենապատիւ Տեղակալը՝ պահանջում է այդ օրագիրը և պահում՝ է իւր մօտ։ Իսկ գերապատիւ Սարգիս եպիսկոպոսը, օգոստոսի 15-ին տալով Սինոդիս յայտարարութիւն, որով խնդրում է վաւերական համարել այդ օրագրի մէջ դիպուածով գծուած իւր ստորագրութիւնը, ստորագրում է պատասխանի փոխանակ նոր գրուած հրամանը, որը նմանապէս պահանջելով տէր Տեղակալը պահում է իւր մօտ։ Սրանից յետոյ Գերապատիւ Արիստակէս եպիսկոպոս Դաւթեանը օգոստոսի 19-ին տալիս է այսպիսի յայտարարութիւն. «Անցեալ յուլիսի 31-ին Սինոդի առենադպիր երբ դրուեց իմ առաջ Ագքիրմանցի պորուչիկ Մկրտիչ Երամեանի Եղիսաբեթ Սիմէոնեան Աստուածատրեանցի հետ պսակուելու թոյլտուութեան օրագիրը ստորագրելու համար, տեսայ որ իմ ստորագրութիւն կամ գրաւոր կարծիք տալուց առաջ ար-

գէն ստորագրուած է միւս Ատենակալներից և պէտք է կատարուէր, նոյն ժամում Սուքիաս և Սարգիս Արբազան եպիսկոպոսների ներկայութեամբ յայտնեցի բանաւոր, որ այդ արենակցական ազգակցութեան 5-րդ աստիճանի պսակը անթերելի է ըստ մեր եկեղեցական կանոնների և թէ իբրև պարզ հոգևոր գործ կախուած է միանգամայն ազգի Հայրապետի բարձր իրաւունքներից։ Այս կարծիքի հետ համաձայնելով նոցին արքազնութիւնները անմիջապէս պատուիրեցին գործավարին՝ իրենց սխալմամբ ստորագրած այն օրագիրը անգործադիր թողնել և պատրաստել առանձին հրաման Բեսարաբիայի Կոնսիստորիային ծանուցանելու համար, որ այն պսակի վախճանական վճիռը մնալու է մինչև ընտրելի Հայրապետի գահակալութիւնը, որի բնագիրն ստորագրեց Գերապատիւ Սարգիս եպիսկոպոսն և ես, բայց թէ ինչո՞ւ չէ կատարուում Անդամների այս վերջին պատուէրը, այդ ինձ անյայտ է մնում։ Այս ամենը յայտնելով Ս. Սինոդիդ, խնդրում եմ խնայարհարար նախ՝ եթէ հնար է գերադասել մեր եկեղեցական կանոնների պահպանութիւնը և Արբազնագոյն Կաթուղիկոսի իրաւասութիւնը պարզ հոգևոր գործերում, թողնելով այն պսակի թոյլատրութեան վճիռը մինչև նրա գահակալութիւնը, իսկ եթէ ոչ՝ անպարտ և անբասիր համարել ինձ ապագայ մեղադրանքներից այս գործի վերաբերութեամբ. երկրորդ՝ խնդրում եմ փարատել իմ տարակուսանքս, թէ արդեօք ինչ հարկեցուցիչ պատճառներ կային, որոնցից ստիպուած աւելորդ է համարուած կանխաւ իմաց տալ ինձ՝ այդ գործի օրագրում ստորագրելու կամ կարծիք յայտնելու, մինչդեռ իբրև կրտսերագոյն անդամ ինձնից պէտք է սկսուէր ստորագրութիւնը և ես բնաւ չեմ եղել բացակայ, ուստի և այդ տեսակ վարուելը համարում է ակնյայտնի շեղումն օրինական կարգից և կամ արհամարհումն անդամակցական պաշտամանս, և երրորդ՝ որովհետև այն օրագիրը կազմելիս չէ պահպանուել օրինական կարգը, ուստի և ըստ իմ կարծեաց հարկաւոր է թողնել այն անկատար, իբրև զուրկ օրինական զօրութիւնից։ Ցեսոյ գերապատիւ Սուքիաս եպիսկոպոսը նոյն օգոստոս ամսի 20-ին տալիս է այս յայտարարութիւնը. «Ագքիրմանցի, պահեստի զօրքի պորուչիկ Մկրտիչ Երամեանի Եղիսաբեթ Սիմէոնեան

Աստուածասիրեանցի հետ արենակցութեան հինգերորդ աստիճանի պսակը անօրինող օրագրում՝ որ կայացել է անցեալ յուլիսի 31-ին՝ եղած իմ ստորագրութիւնս յետս եմ կոչում յետագայ յարգելի պատճառներով. նախ՝ խօսեցեալների պսակադրութիւնը արենակցութեան հինգերորդ աստիճանումն է՝ որպիսին եկեղեցու Հայրապետները շատ քիչ են թոյլ տուել՝ ապօրինի ճանաչելով այդպիսիների գաղտնի պսակադրութիւնը և պատուհասելով պսակադիրներին՝ ինչպէս յայտնի է Ատենիդ գործերից։ Երկրորդ՝ մի քանիսների հեռագրով և նամակով ինձ արած միջնորդութիւնները այդ պսակի թոյլտուութեան համար անցեալ փետրուար ամսին Հոգելոյս Հայրապետից բացասուեցին՝ որի մասին հաղորդեցի միջնորդներին։ Եւ երրորդ՝ այդ պսակի թոյլտուութեան վերջին բարեխօսը այս տարուայ յունիս ամսին ներկայանալով ինձ՝ հաւատացրեց թէ Ատենիդ բոլոր Անդամները համաձայնում են այդ պսակադրութեանը՝ յանձն առնելով միջնորդել առաջի ընտրելի Քահանայապետին ազգիս՝ և ես միայն եմ՝ որից խնդիրն սպասում է վախճան առնել։ Աւելորդ չեմ համարում մէջ բերելու և յետագայ իրողութիւնները՝ երբ առարկութիւն կար յիշուած պսակի թոյլտուութեան համար՝ Սրբազան Սարգիս եպիսկոպոսն ասաց՝ թէ ի յարգանս իմ ստորագրութեան ցուցել է նա համաձայնութիւն այն օրագիրն ստորագրելու՝ որը ըստ ուղիղ տեսութեան և համոզմանց Սինոդի գործն ու արտօնութիւնը չէ՝ այլ վերաբերում է եկեղեցու Քահանայապետին իբրև սոսկ կրօնական խնդիր։ Եւ երբ որ նրան յայտնեցի միջնորդի ինձ ասած խօսքերը՝ նա Սարգիս եպիսկոպոսը՝ արդար բարկութեամբ իմ և Գերապատիւ Արիստակէս (Դաւթեան) եպիսկոպոսի ներկայութեամբ գծեց իւր անուան ստորագրութեան վրայ՝ եղծելով իւր ստորագրութիւնը և այն օրից մինչև այսօր բերանացի՝ Պրօկուրորի և Ատենադպրի պաշտօնակատարների միջոցով՝ Սրբազան Անդամների ներկայութեան ծանուցել եմ միշտ իմ անհամաձայնութիւնս Սինոդի Ատենապետի Գեր. Տեղակալին՝ և այժմ էլ գրով յայտնելով Սրբազան Սինոդիդ՝ խնդրում եմ յարգոյաբար՝ եթէ հնար է՝ թողնել այս խնդիրը ցընորութիւն և օծութիւն Հայրապետի ամենայն Հայոց՝ որով

յարգուած կլինին Ծայրագոյն Պատրիարքի և ամենայն Հայոց Կաթուղիկոսի իրաւունքն ու արտօնութիւնը, պատուուած կլինին որբազան Ատենականների միութիւնն ու համերաշխութիւնը, և որ աւելի գլխաւորն է, յարգարուում է բացասութեան շաւիղ նմանօրինակ չհասութիւնների համար, հաւատաւոր ժողովրդեան մտքերի անդորրութեան համար։ Սինոդի չորս անդամներ՝ Սուքիաս, Ներսէս, Սարգիս և Աբրահամէս (Դաւթեան) եպիսկոպոսները լսելով Ատենում այս երեք յայտարարութիւնները, արժան են վարկանում չիք դարձնել իսկական օրագիրը, որ գտնուում է Տէր Տեղակալի մօտ, ուստի և Սուքիաս եպիսկոպոսը ուղարկում է Սինոդի կարգապահ Պ. Յովակիմ Շամքորեանցին օրագիրը պահանջելու։ Ամենապատիւ Տեղակալը պատուիրում է Շամքորեանցին ծանուցանել, թէ այդ օրագիրը, որ ընդունել է օրինական զօրութիւն, Սինոդն ինքնին չէ կարող ոչնչացնել, թող մնայ այդ մինչև Պ. Պրոկուրորի վերադարձը, որի հետ խորհրդակցելով Ատենում անենք, ինչ որ արժանն է, որպէս զի օրէնքի ընդդէմ որ և է բան չկատարուի։ Սակայն Գեր. Սուքիաս եպիսկոպոսը ունկնդիր չլինելով Տ. Տեղակալի խօսքերին, կազմում է օրագիր, անցեալ սեպտեմբերի 9-ին, ասելով թէ պէտք չէ սպասել Պրոկուրորի դարձին, որովհետև այս պսակը լինելով զուտ հոգևոր գործ բնաւ տեղիք չկայ Պ. Պրոկուրորի միջամտութեանն ու խորհրդին, այլ հրամայում է ի չիք դարձնել Յուլիսի 31-ի օրագիրը, իսկ վերոյիշեալ խօսքերի պսակի թոյլատրութիւնը թողնել մինչև ընտրելի Բ. Սանայատեսի հայրապետութեան գահը բարձրանալը։ Այս մտքով էլ գրում է հրաման Բեսարաբիայի կոնսիստորիային սեպտեմբերի 10-ին, թ. 3439, որը ստորագրուելով նրանից (Սուքիաս Արբազանից), առաքում է նամակատունը և ապա գրութեամբ, նոյն ամսի 11-ին, թ. 3481, ետ է պահանջում այնտեղից և կցում է գործի հետ։ Այն օրագիրը, որից գրուել էր հրամանը, սեպագրումն հանդերձ պահում է իւր մօտ Սուքիաս եպիսկոպոսը և տալիս է կազմել ուրիշ օրագիր նոյն մտքով, միայն առանց մէջ բերելու Գեր. Սարգիս եպիսկոպոսի յայտարարութիւնը, որով վաւերական էր համարում (Սարգիս եպիսկոպոսը) իւր ջնջած ստորագրութիւնը։ Պրոկուրորի պաշտօնակատարը անհամաձայն լինելով այդ օրագրին,

չէ արձակում այդ, և ուղարկում է Սինոդը Երամեանցի հեռագրով բողոքի պատճէնը, յուլիսի 31-ի օրագրի կատարումը փութացնելու համար։ Սրանից յետոյ Սուքիաս եպիսկոպոսը նոյն ամսի 22-ին ինքն իւր ձեռքով յօրինում է հետևեալ օրագիրը. «1891 ամի, սեպտեմբերի 22-ին, ըստ Հրամանի ՆՈՐԻՆ ԿԱՅՍԵՐԱԿԱՆ ՄԵԾՈՒԹԵԱՆ ԻՆՔՆԱԿԱԼԻՆ ամենայն ռուսաց Ս. Էջմիածնի Հայոց Լուսաւորչական Սինոդում լսեցին պրոկուրորի պաշտօնակատար պ. Սիմէոն Փիլիպպոսեանցի գրութիւնը, (21 սեպտ. թ. 52), որի մէջ գրուած է. «կարդալով Արբազան Սինոդից օրագրութիւնը, որ կազմուած է ամսի 9-ին և հաստատած է ինձ 19-ին, առանց Ատենապետի Ս. Տեղակալի ստորագրութեամբ հաստատութեան, որով Սինոդ վճռում է փոխել իւր վճիռը, տրուած այս տարուայ յուլիսի 31-ին պորուչիկ Մկրտիչ Երամեանցի պսակի համար, գտնում եմ այդ օրագիրը հակառակ 1876 ամի օրինաց I մասի, II հատորի, 250, 738, 739 և 740 յօդուածների, ուստի և իմ անհամաձայնութեան ցուցումով վերադարձնում եմ Սինոդ»։ Ներկայ գրութեան մէջ յառաջ բերուած օրէնքի յօդուածներից երևում է, որ նախ՝ Ատենատեղերը իրաւունք ունին փոփոխել իրենց եզրակացութիւնը, երբ տակաւին օրագիրը չէ յայտնուած, չէ ստորագրուած բոլոր Ատենակալներից և չէ կատարուած և երկրորդ՝ օրագիրը օրինական զօրութեան մէջ է մնում, եթէ ստորագրուած է անդամներից, հաստատուած է նահանգապետից և արձակուած է Պրոկուրորից ևն։ ՏԵՂԵԿՈՒԹԻՒՆ. Դեր. Սուքիաս և Արիստակէս (Դաւթեան) եպիսկոպոսների գրաւոր վարկումներից, որ արձանագրուած են ամսիս 9-ին կայացած օրագրում, երևում է Ա. որ Ատենիս օրագիրը, կազմուած այս տարուայ 31-ին, կայացել է և արձակուել է պրոկուրորի պաշտօնակատարից առանց գիտութեան, ստորագրութեան և կամ գրաւոր կարծեաց Արբազան Արիստակէսի (Դաւթեան)։ Բ. Դեր. Անդամներ՝ Սուքիաս և Յարգիս եպիսկոպոսները թէև ստորագրել են այն օրագիրը, բայց առաջինը նրանցից գրաւոր դիտողութեամբ համարել է իւր ստորագրութիւնը անվաւեր, իսկ երկրորդը՝ գծելով իւր անուան ստորագրութեան վրայ եղծել է, այն պատճառով, որ ըստ կանոնաց

Հայաստանեայց եկեղեցու և պետութեան օրինաց չհաստատեալ պատկերութեանց թոյլատրութիւնը վերապահուած է Ծայրագոյն Պատրիարք Կաթուղիկոսի իրաւանց։ Գ. Սինոդի Անդամ Գեր. Ներսէս եպիսկոպոսը թէև յետոյ չէ կոչել իւր ստորագրութիւնը կամ եղծել, սակայն համաձայնել է իւր միւս երեք ամբողջակիցների կարծեաց հետ, եւ Դ. յուլիսի 31-ին կազմուած օրագիրը անկատար է մնում ցայսօր Սինոդի Ատենապետի Տեղակալի մօտ, որը կարգապահ Պ. Յովակիմ Շամքորեանցի ձեռքով յայտնել է, թէ այս գործը մնայ առանց ընթացքի մինչև Պրոկուրորի վերադարձը, որի հետ և խորհուրդ անելով՝ կամ կատարել կամ արգելել։ Ատենիս չորս անդամները կշռադատութեան առնելով այն օրագրի տարականոն կազմութիւնը, որը Ատենապետի Գեր. Տեղակալը չէր դարձնում Սինոդ, որ փոփոխենք, ստիպուած եղան առանձին օրագրութիւնով, ամսիս 9-ին, Երամեանցի պատկի թոյլատրութիւնը թողնել անկատար մինչև նոր Հայրապետի ընտրութիւնը, համարելով այդ իրենց իրաւունքներից բարձր։ Սինոդս հրահանգուած Լուսաւորչական Հայոց եկեղեցու կառավարութեան վերաբերեալ Բարձրագոյն Կարգադրութեան (Պոլոժենիէ) 25, 37, 40, 41 և 42 յօդուածներով՝ պարզ հոգևոր գործերի և ամուսնութիւնների օրագրութեանց հաստատութիւնը և նրանց վախճանական վճիռը, մանաւանդ երբ պատկը կատարուելու է արենակցութեան մերձաւոր աստիճանում, համարում է ազգիս Արքաղնագոյն Քահանայապետի արտօնութիւնը, որը վարուելու է այդպիսի խնդիրներում եկեղեցու սուրբ հարց կանոններով։ Նկատելով և այն, որ Պրոկուրորի պաշտօնակատարի գրութեան մէջ յառաջ բերուած յօդուածները թէև ըստ էութեան չեն վերաբերում չհաստատեալ գործերի, բայց և այնպէս՝ ըստ արտաքին ձևապահութեան ոչ միայն հակառակ չեն՝ դեռ և ս չը կատարուած վճիռների փոփոխութեանը, այլ ուղղակի համեմատ են Սինոդիս ամսի 9-ի օրագրական եզրակացութեանը, Ատենս վարանում է թէ արդեօք պ. պաշտօնակատարի անհամաձայնութիւնը առաջացել է ջերմեռանդն և հաւատարիմ օրինապահութիւնից և հոկողու-

թիւնից, որին չէ ենթարկւում այդ կրօնական խնդիրը, թէ յանուն օրինաց անօգուտ տարաձայնութիւններ յարուցանելու կամակոր յօժարութիւնից, որով և նկրտում է յուլիսի 31-ի օրագրի վճռի կատարումը ձեռք բերել, այն օրագրի, որը աճապարել է անկանոնաբար արձակել, նրան օրինական զօրութիւն տալու համար, առանց պատկառելու երկու անդամ եպիսկոպոսների կարծիքներից, որոնցից մինը չէր ստորագրել և միւսը արդէն եղծել էր իւր ստորագրութիւնը։ Եւ ոչ այսչափ միայն, այլ (պ. պաշտօնականատարը) ձեռաց իմաց է տուել պսակատէր Երամեանցին Սինոդի վճռի մասին և յարուցել է նրան հեռագրական պիտակով բողոքաւոր դէպի ինքը Սինոդի վրայ։ Երամեանցը բողոքել է պսակագրութեան հրամանը ուշանալուն համար, ինչպէս այդ տեսնւում է ամսիս 18-ի համար 50 գրութիւնից։ Պրոկուրորի պ. պաշտօնականատարը Բարձրագոյն Կարգադրութեան վերոյիշեալ յօդուածների ցուցումներին իբրև գիտակ, կարող էր ըստ տրամադրութեան այդ յօդուածների ձգտել գործի խաղաղական վախճանին, կամ թողնել այդ գործի պատասխանատուութիւնը պ. Պրոկուրորին, որն եօթնօրեայ ժամանակով հեռանալով այստեղից յանձնել է իրեն պաշտօնի վարումը և առ՝ գրէթէ չորս ամիս ուշացնում է իւր վերադարձը։ Բայց ի զարմանս Ատենիս անդամների (պ. պաշտօնականատարը) այնչափ բուռն եռանդով հակառակում է օրագրական եզրակացութիւններին, որ մինչև անգամ հեռագրով ստանում է թղթերի թուահամարներ Դիլիջան աւանից (որտեղ գտնւում է պ. Պրոկուրորը) և պ. Պրոկուրորի հետ միաժամանակ արձակում է յանուն Սինոդի գրութիւններ և ապշեցնում է մեր մտքերը, թէ որ օրէնքով կամ որպիսի անհրաժեշտ հարկից ստիպուած Պետութեան օրէնքների երկոքին հսկողները միջամտում են Ատենի գործառնութիւններին։ Այդքի առաջ ունենալով վերոբերեալ հանգամանքները ՀՐԱՄԱՅԵՑԻՆ՝ Սինոդիս օրագրական եզրակացութիւնը, որ կայացել է ամսի 9-ին՝ պորուչիկ Մկրտիչ Երամեանցի օրիորդ Եղիսաբեթ Սիմէոնեան Աստուածատրեանցի հետ պսակագրութեան թոյլատրութիւնը ցգահակալութիւն ընտրելի Հայրապետին թողնելու համար,

ձայների առաւելութեամբ ածել ի կատար և այս օրագրի պատճէնը ուղարկել Պրոկուրորի պ. պաշտօնակատարին ի տեղեկութիւն։» Երամեանցը չստանալով պատասխան իւր այն հեռագրին՝ դիմում է պ. Պրոկուրորին ուրիշ հեռագրով նոյն ամսի 29-ին և խնդրագրով՝ հոկտեմբերի 7-ին, որոնցից առաջինն է այս. «Այս տարուայ յուլիսի 31-ին Էջմիածնի Սինոդը կազմել է օրագիր իմ պսակը թոյլ տալու համար, որը մինչև հիմայ չէ կատարուում։ Յայտնելով ի գիտութիւն Ձերդ Գերազնուութեան, պատիւ ունիմ խոնարհաբար խնդրել՝ անել Ձեր կողմից կախուած կարգադրութիւնը շուտափոյթ կատարելու համար յիշեալ օրագիրը»։ Իսկ վերջինն ունի այս օրինակը. «Ս. Էջմիածնի Սինոդը իւր վճռով այս տարուայ յուլիսի 31-ին, որ արձակուած է նոյն իսկ օրը Ձեր պաշտօնակատար՝ Սինոդի ատենադպիր պ. Փիլիպպոսեանցից, յարգեց Բեսարաբիայի կոնսիստորիայի միջնորդութիւնը թոյլ տալով իմ պսակս օրիորդ Եղիսաբեթ Սիմ. Աստուածատրեանցի հետ, ազգականութեան 5-րդ աստիճանում։ Որովհետև երկար ժամանակ կոնսիստորիան չէ ստացել այդ պսակի հրամանը, ստիպուեցայ հեռագրով խնդրել Սինոդի Ատենապետի Տեղակալ Երեմիա եպիսկոպոսից և Ձեր պաշտօնակատար պ. Փիլիպպոսեանցից, որ շուտով կատարուի Սինոդի վճիռը։ Իմ հեռագիրներս մնացին առանց հետևանքի։ Որից յետոյ ստանալով տեղեկութիւն ուրիշների ձեռքով իմացայ նախ՝ թէ օգոստոսի 19-ին Սինոդի անդամ՝ Սուքիաս և Արիստակէս (Դաւթեան) եպիսկոպոսները տուել են յայտարարութիւն, որ իմ գործը իբրև զուտ հոգևոր գործ, ըստ զօրութեան XI հատորի, I մասի, 945 յօդուածի, կախուած է Պատրիարք-Կաթուղիկոսի իրաւունքներից և ոչ Սինոդից. երկրորդ՝ ինչպէս երևում է այդ յայտարարութիւնից, Սինոդի Դիւանատան մէջ, առանց կանխապէս խորհրդածութեան ընդհանուր Ատենում, այսինքն՝ առանց գիտութեան Նախագահի և Պրոկուրորի վճռել են՝ իմ գործը թողնել մինչև Պատրիարքի ընտրութիւնը, և երրորդ՝ այդ օրագիրը ստորագրել են Սինոդի չորս անդամներ՝ Սուքիաս, Ներսէս, Սարգիս և Արիստակէս (Դաւթեան) եպիսկոպոսները, որոնցից երեք առաջինները, յուլիսի 31-ին, Նախագա-

հի հետ միասին վճռել են թոյլ տալ իմ և օրիորդ Եղիսաբեթի պսակը, իսկ վերջինը բոլորովին չէ միջամտել գործին։ Ուստի՝ ուշադրութեան առնելով, որ Սինոդն իւր տեսչութեան տակ ունի բացի ուրիշ գործերից և պսակի գործերը (Օրինաց հատ. XI, I մասն, 7 պ. 938 յօդ.), որ Սինոդը այդ հիման վրայ Մակար Կաթուղիկոսի մահից յետոյ վճռել է պսակի շատ գործեր, որ ըստ զօրութեան նոյն օրինաց 943 և 946 յօդուածների, Սինոդը պարտաւոր է քննել գործերը համաձայն՝ առհասարակ կոլլեգիական հաստատութեանց համար սահմանուած կանոնների, որ ըստ 60, 89, 90, 140 և այլն յօդ. I Մասին, II հատ. կոլլեգիական հաստատութիւնների մէջ նիստերը նշանակւում են ընդհանուր ատեանում բացուելով և փակուելով նախագահի հրամանով, և որ՝ համաձայն նոյն օրինաց 174, 185, 282 և 795 յօդուածների ճշգրիտ մտքի՝ երբ ատենական տեղերի վախճանական վճիռները, գրուելով վերջնական ձևով՝ ստորագրւում են նիստին մասնակցող բոլոր անդամներից և արձակւում են Պրոկուրորից՝ համարւում են անփոփոխելի, կատարւում են փութով և կարող են փոփոխուիլ միմիայն Բարձրագոյն Իշխանութեամբ։ Ցեսնում եմ, որ Սինոդի անդամ՝ Սուքիաս և Արիստակէս (Դաւթեան) եպիսկոպոսներից տրուած յայտարարութիւնը իմ գործի վերաբերութեամբ, և այդ յայտարարութեան վրայ հիմնուած վճիռը՝ թէ ըստ էութեան և թէ ըստ եղելութեան կարգի, ղրկուած են օրինական նշանակութիւնից և թէ՝ Սինոդի յուլիս 31-ի վճիռը, ինչպէս կանոնաւոր կազմուած և լրացած վճիռ անկարելի է փոխել որ և է պատճառով Սինոդի մէջ։ Առաջ բերուածների հետ ունենալով ի նկատի և օրինաց XI հատորի I մասի, 948 և 949 յօդուածները, համարձակւում եմ դիմել Ձեր Գերազնութեանը խոնարհագոյն խնդրանքով, որ պահպանուի իմ գործի քննութեան օրինական կարգը և Սինոդի յուլիս 31-ի վերջնական վճիռը փութով կատարել տրուի։» Պ. Պրոկուրորը՝ ուղարկելով Սինոդը այս խնդիրն ու վերոյիշեալ հեռագիրը, խնդրում է փութանակի ծանուցանել իրեն Սինոդի արած կամ անելի անօրէնութիւնը այս գործի վերաբերութեամբ, որ յայտնէ աղեր-

սարկուին։ Սրանից յետոյ Ատենադպիրը՝ պ. Սիմէոն Փիլիպպոսեանցը, յայտնում է հետևեալը. 1876-ին լոյս ընծայուած Կայսերութեան օրինաց Ա. մասի, բ. հատորի, 153 յօդուածի զօրութեամբ իրաւունք եմ համարում յիշեցնել Սրբազան Սինոդիդ, որ նոյն հատորի 250, 738, 739 և 740 յօդուածների համաձայն պէտք է այս գործը առաջի առնել Տնօրէն Ծերակուտին ի տնօրէնութիւն։ Որից յետոյ մոնում են Սինոդը նախ՝ յունուարի 13-ին Սինոդի անդամ Գերապատիւ Սարգիս եպիսկոպոսի յայտարարութիւնը, որ է հետևեալը. «Մի քանի օր առաջ, Ագքիրմանցի Երամեանցի պսակի գործի մասին անդամներիս միմեանց հետ խօսելուց և իրար կարծիք լսելուց յետոյ, ես պ. Ատենադպրից պահանջեցի տալ ինձ այս գործը նորից կարդալու համար, նա պատասխանեց թէ կտայ թերթահամարելուց յետոյ։ Անցան մինչև այժմ ոչ սակաւ օրեր և նա չկատարեց։ Մի կողմ թողած և այն, որ մինչև այսօր ես երբէք չեմ լսել կամ տեսել, որ երբ Սրբազան Սինոդի անդամները որ և է գործ պահանջեն՝ այդ գործին աւելի ծանօթանալու և հանգամանքներին տեղեկանալու համար, այդպիսի թերթահամարութեան երկբայանաց և կասկածանքի խօսքեր լսեն։ Ամսիս 11-ին Սինոդի Ատենում դարձեալ յիշելով պահանջեցի պ. Ատենադպրից այն գործը, բայց դարմացայ, երբ նա պատասխանեց թէ՝ պ. Պրոկուրորն ուզեց այն գործը, տարայ նորան, այժմ էլ նորա մօտ է։ Այս եղելութեան համար պարտականութիւն եմ համարում օր առաջ յայտնել Ատենիդ և խնդրել Ձեր պատշաճաւոր տնօրէնութիւնը։ Ինչպէս շատ անգամ ասել եմ ես Սինոդի Ատենումդ և այն ժողովում, որ տեղի ունեցաւ Ամենապատիւ Տ. Տեղակալի մօտ, ուր ներկայ էր և պ. Պրոկուրորը, ես երբ իմ ստորագրութիւնս ջնջեցի Սինոդիդ անցեալ տարուայ յուլիսի 31-ի օրագրութեան մէջ (Երամեանցի պսակի գործին վերաբերեալ), այդ օրագիրը դեռ չէր ստորագրուած Գերապ. Արիստակէս եպիսկոպոս Դաւթեանից և չէր արձակուած պ. Պրոկուրորի պաշտօնակատար Սիմէոն Փիլիպպոսեանցից, և ինչպէս քաջայայտ է ինձ՝ որ պ. Պրոկուրորի պաշտօնակատարը արձակել է այն օրագիրը իմ ստորագրութիւնս ջնջելուց յետոյ, որպէս զի յաջողեցնէ այդպի-

տով օրինական կերպարանք տալ այն օրագրին, որով և թոյլատրել տալ Երամեանցի պսակը։ Այս ծանրակշիռ հանգամանքի վերաբերութեամբ պատիւ ունիմ խնդրել Սինոդիցդ, որ ջանայ քննել վերոգրեալները և ստուգելուց յետոյ անել պարտուպատշաճ տնօրինութիւնը»։—և յետոյ՝ Սինոդի անդամ բարեշնորհ Բարդուղիմէոս վարդապետի յայտարարութիւնը, որ է այս. «Պատիւ ունիմ սրանով խնդրել Ատենիցդ չթողնել առանց պարտուպատշաճ տնօրէնութեան Սինոդիս Անդամ Գեր. Սարգիս եպիսկոպոսի ամսիս 13-ին տուած յայտարարութիւնը, որով յայտնում է Նորին Սրբազնութիւնը թէ 1891 ամի յուլիսի 31-ի Մկրտիչ Երամեանցի պսակի թոյլտուութեան օրագիրը խարդաւանօք և կեղծեօք օրինական կատարման ձև է ստացել այն ժամանակուայ Պրոկուրորի պաշտօնակատար պ. Սիմէոն Փիլիպպոսեանցից և խնդրում է օրինական քննութիւն։ Գործի հանգամանքները լուսաբանելու համար հարկ եմ համարում ասել իմ կողմից, որ յիշեալ Երամեանցը փորձել է արծաթով յաջողեցնել իւր պսակի թոյլտուութիւնը, որը գիտեն և Սինոդիս բոլոր անդամները։ Այլ և խնդրում եմ ծանուցանել փութով վերոգրեալների մասին Նորին Գերազնութեան Սինոդի պ. Պրոկուրորին, որ քանի՞ քանի անգամ ստիպողական գրութեամբ պահանջում է Սինոդի Ատենիցդ Երամեանցի պսակի գործի վախճանական որոշումը»։ Այս լսելիս՝ Սինոդի Անդամ Սրբազան Արիստակէս եպիսկոպոս Սեդրակեանը յայտնեց Ատենում, որ ինքը պարտանձին է համարել մի քանի օր առաջ խնդրել Գեր. Սարգիս եպիսկոպոսից յետ կանգնել քննութիւն պահանջելուց, գիտնալով հաստատ, որչափ ներում են գործի հանգամանքները այդ ասել, որ քննութեան հետևանքը ծանրանալու է աւելի՝ նոյն իսկ քննութիւն պահանջողի վրայ։

Սինոդիս պ. Պրոկուրորը՝ իւր թ. 2 և 5 գրութիւններով 1892 ամի յունուարի 12-ին և 20-ին, առաքելով Սինոդս աղերսարկու Մկրտիչ Երամեանցի երկու հեռագիրները, որ ուղղուած էին Պրոկուրորին Սինոդի 31 յուլիսի 1891 ամի վճռի կատարումը աղերսելով, խնդրում է շատ օրինական պատճառաբանութեամբ շտապեցնել Երամեանցի խնդրին բաւականութիւն

տալ ստորագրութեամբ կամ բացատութեամբ և կամ տալ իրեն տեղեկութիւն այն պատճառների մասին, որոնք արգելք են լինում այդ գործի վճռման, որպէս զի ինքն էլ այդ յայտնէ աղերսարկուին։ Իսկ նոյն ամսի 23-ին, Նորին Գերազնութիւնը դիմում է Սինոդիս այս գրութեամբ (թ. 6). «Սինոդիդ գործերից քաջ յայտնի է ինձ, որ դեռ և՛ս յուլիս ամսում (1891 ամի) վճռուած էր Ագքիրման քաղաքի պահեստի զօրաց Պրապօրշչիկ Երամեանցի 5-դ աստիճանի ազգակցութեան ամուսնութեան գործը, բայց Սինոդիդ մի քանի Անդամների արած ընդդէմ օրինաց գործողութիւնների, այն է՝ Սուքիաս, Ներսէս և Սարգիս եպիսկոպոսների արածների պատճառով այդ գործը յետաձգուել է մի և նոյն անդամների ձեռքով, որոնցից վերջինը ջնջել է իւր ստորագրութիւնը օրագրի վրայից՝ Պրոկուրորի պաշտօնակատարից այդ օրագիրը արձակուած լինելուց յետոյ։ Միևնոյն անդամների առաջին վճռով և Պատրիարքի Տեղակալի համաձայնութեամբ թոյլ էր տրուած Երամեանցին մտնել 5-դ աստիճանի ազգակցութեան ամուսնութեան մէջ, իսկ այդ երկրորդ վճիռը փոփոխուած է առանց մասնակցութեան և գիտութեան Տեղակալի, որով բացատուել է միևնոյն պսակը և բացատական Հրամանը, ստորագրուած Սուքիաս եպիսկոպոսից, յետ է պահանջուել և ստացուել նամակատանից։ Գործը այդ դրութեան մէջ՝ դրուեց նոր Անդամների առաջը, որոնք պաշտօնի էին մտել անցեալ տարուայ հոկտեմբերի 16-ին, և այդ օրից սկսուած այդ գործը գտնուում է կիրառութեան և վճռահատութեան մէջ, բայց մինչև այսօր վախճան չէ առել, չը նայելով որ այդ գործի համար շատ անգամ նիստ է կազմուել թէ պաշտօնապէս՝ Սինոդի Ատենում և թէ ի մասնաւորի, արտաքոյ Սինոդի, համաձայն իմ պահանջներին գործին շուտափոյթ վախճան տալու համար։ Բացի դրանից՝ այս օրերս Սինոդի Անդամ Սարգիս եպիսկոպոսը տուեց առանձին յայտարարութիւն իւր ձեռքով իւր ստորագրութիւնը օրագրում ջնջելու գործը հետաքննելու համար, որ իմացուի թէ արդեօք այդ ստորագրութիւնը ջնջուել է Պրոկուրորի պաշտօնակատարից օրագիրը արձա-

կուելուց առաջ, թէ՞ արձակուելուց յետոյ։ Իսկ Սինոդի միւս անդամը՝ Բարդուղիմէոս վարդապետը տուեց յայտարարութիւն պահանջելով որ անպատճառ քննուի այդ գործը, ինչպէս որ պահանջում է յայտարարութեամբ Սարգիս եպիսկոպոսը, որովհետև (ասում է Բարդուղիմէոս վարդապետը) այս գործում եղել են նաև կաշառումներ։ Ուրեմն զանազան պատճառներով գրեթէ կէս տարի ժամանակ գործը փախճան չառաւ, յատկապէս այն պատճառով, որ Սինոդի Անդամներին ցանկալի չէ գործին ընթացք տալ պատշաճաւոր կարգով, այլ ենթադրում են՝ կամ ըստ ամենայնի թողնել այդ գործը առանց ընթացքի մինչև ցրնտրութիւն Նոր Հայրապետի և կամ թէ՝ յանձնել քննչին եղծումների և կաշառմանց քննութեան համար։ Առնելով ի նկատի, որ օրինաց II հատորի 250 յօդուածի համաձայն՝ ինչպէս դատաստանական, նոյնպէս և վարչական ատեաններին արգելուած է փոփոխել իրենց սեպհական վճիռը — որ այս գործի մասին արդէն միանգամ փոփոխուել է Սինոդիդ վճիռը — որ այժմ Սինոդիդ այս կամ այն նոր վճիռը ըստ էութեան լինում է երկրորդ փոփոխումն վճռի, այս հաշուով կարող է ուրեմն պատահել և երրորդ վճիռ, և թէ ըստ 940 յօդուածոյ XI հատորի, Սինոդը Ռուսաց Կայսերութեան մէջ բնակուած Հայերի գործերի մասին ենթարկուում է Կառավարիչ Սենատի և Ներքին Գործերի Նախարարի տեսչութեանը — ուստի իմ կարծիքով Երեմեանցի գործը, առանց դնելու նոր վճիռ ըստ էութեան, պէտք է ուղարկել փութով ի բարեհայեցողութիւն Կառավարիչ Սենատի, Ներքին Գործոց Նախարարի ձեռքով, որպէս զի վերաքննուի Սինոդի վճիռը և օրէնսընդդէմ գործողութիւններին մասնակցող անձերի մասին կարգադրութիւնը։ Այս մասին պարտք եմ համարում յայտնել Սինոդիդ, թէ ըստ զօրութեան II հատորի III հատուածի 1233, 1236 և 1238 յօդուածների, և թէ ըստ զօրութեան այն բանին, որ ներկայ գործում տեսնուում են այնպիսի օրէնսընդդէմ գործողութիւններ, որոնք կապ ունին Սինոդիդ անդամների քննութիւն պահանջելուն հետ, և այդ օրէնսընդդէմ գործողութիւնները ոչ մի կերպով չեն կարող

մնալ լռութեան մէջ մինչև ցընտրութիւն նոր Հայրապետի, այլապէս ասած՝ անորոշ ժամանակով։» Սինոդիս անդամ բարեշրնարհ Բարդուղիմէոս վարդապետը իւր յայտարարութեան մէջ 24 յունուարի, թ. 4 ի միջի այլոց յայտնումէ, թէ «ներկեցաւ գործի մէջ Երեմեանցի պսակի արգելման երկրորդ օրագրի սեւագրութիւնը, որը յիշատակումէ իւր յայտարարութեան մէջ Գեր. Արիստակէս եպիսկոպոսը (Դաւթեան), անցեալ ամի, 19 օգոստոսի, գրելով որ ստորագրել են այդ սեւագրութիւնը ինքն ու Գեր. Սարգիս եպիսկոպոսը։» Այս բանի մասին պահանջուեց բացատրութիւն գործավարի պաշտօնակատար Բենիամին Տէր-Գրիգորեանից, յունուարի 31-ին։ Այդ բացատրութիւնն է հետեւեալը. «Սինոդիդ Ատենապետի Ամենապատիւ Տէր Տեղակալի պատուէրի համաձայն պատիւ ունիմ խոնարհաբար պարզաբանել Ատենիդ առաջ, որ երբ Գերապատիւ Անդամ Սրբազան Սարգիս եպիսկոպոսը իւր ստորագրութիւնը ջնջեց յուլիս 31-ի (1891) օրագրութեան վրայ, որն արդէն արձակուած էր Պրոկուրորի պաշտօնակատարից, այն ժամանակ չորս անդամներ՝ Սրբազան Սուքիաս, Ներսէս, Սարգիս և Արիստակէս (Դաւթեան) եպիսկոպոսները հրամայեցին ինձ գրել նոր օրագիր, Երեմեանցի պսակը մինչև ապագայ Հայրապետի ընտրութիւնը թողնելու համար, առանց յիշելու որ և է բան այն անցքի մասին, որ պատահել էր առաջին օրագրին, որով թոյլատրուած էր մի և նոյն պսակը։ Այդ պատուէրի համաձայն պատրաստեցի սեւագիրը և գրի Ատենում և այդ իմ պատրաստածի վրայ գրեցին իրենց անունները Գեր. Սարգիս և Արիստակէս (Դաւթեան) եպիսկոպոսները։ Երկրորդ օրը երբ Սրբազան Անդամները լսեցին, որ յուլիս 31-ի օրագիրը գտնումէ Ամենապատիւ Տեղակալի մօտ, չը կարողացան ի կատար ածել իրենց որոշումը պատրաստուած սեւագրի համաձայն, որն և իբրև մի աւելորդ թուղթ վերցրին Ատենից, մտածելով որ յուլիս 31-ին կազմուած օրագիրը իբրև վախճանական պահուած է նորին Ամենապատուութեան մօտ։ Յետոյ՝ Գեր. Սարգիս եպիսկոպոսը օգոստոսի 15-ին, Գեր. Արիստակէս (Դաւթեան) եպիսկոպոսը նոյն ամի 19-ին և Գեր.

Սուքիաս եպիսկոպոսը 20-ին տուին յայտարարութիւններ, առաջինը այն մտքով, որ վաւերական համարուի իւր ջնջած ստորագրութիւնը, երկրորդը և երրորդը այն մտքով, որ պատկը թողուի մինչև ընտրելի Քահանայապետի գահակալութիւնը։» Դարձեալ Սինոդի Անդամ բարեշնորհ Բարդուղիմէոս վարդապետը տուեց մի յայտարարութիւն նոյն ամսի 30-ին, թ. 5, այսպիսի բովանդակութեամբ. «Ամսիս 25-ին վերատին յանձնուեց ինձ Ագքիրմանցի Մկրտիչ Երեմեանցի պատկի գործը, ժապաւինուած և թերթահամարուած, այլ և նրա հետ միասին պ. Պրոկուրորի գրութիւնների (12-ի, 20-ի, $^{22}/_{23}$-ի, և 23-ի №№ 2, 5, X և 6) թարգմանութիւնները։ Իսկ Անդամ Արիստակէս եպիսկոպոս Դաւթեանի ձեռքով ստացայ 26-ին Սարգիս եպիսկոպոսի յայտարարութիւնները ամսիս 13-ին և իմ յայտարարութիւնները ամսի 21-ին և 24-ին, №№ 3, 4. որանց հետ միասին և պ. Բենիամին Տէր Գրիգորեանցի բացատրութիւնը (24 հոկտ. 1891 ամի), որը երբ առաջին անգամ ամսիս 23-ին յանձնեցին ինձ այդ գործը ժապաւինուած և թղթահամարուած, չը կար այդ թուղթը գործի մէջ, որի մասին ծանուցանում եմ Ատենիդ ի գիտութիւն։ Յարակցելով նաև որ երեկ բերանացի զեկուցանելով և ցուցանելով յիշեալ բացատրութեան թղթի կեղծութիւնը, ի ներկայութեան և հրամանաւ Տ. Անդամների ծրարուեց այդ բացատրութիւնը ուրիշ թղթերի և մուեալ թղթերի կցորդ մասանի (1891 ամի) հետ և պահւում է իմ մօտս հաճութեամբ միւս Անդամների։ Սրա հետ վերադարձնում եմ գործն ու թղթերը»։ ՀՐԱՄԱՅԵՑԻՆ. պահեստի զօրաց պրապօրշչիկ Ագքիրմանցի Մկրտիչ Երեմեանցի պատկի թողլութեան խնդիրը Եղիսաբէթ Սիմէոնեանի հետ, ազգականութեան հինգերորդ աստիճանում՝ համարելով Սինոդիս իրաւասութիւնից բարձր, թողնել Ամենայն Հայոց ընտրելի Քահանայապետի բարեհաճ կամքին, իսկ զեղծումների և կասարուելիք քննութեան մասին, որը պահանջում են Սինոդիս երկու Անդամները՝ Գերապատիւ Սարգիս եպիսկոպոսը և բարեշնորհ Բարդուղիմէոս վարդապետը, առաքելով այս օրագրութեան պատճէնը խնդրել նորին գերազնութեան Սինոդիս պ. Պրոկուրորի տնօրինութիւնը։

(Ստորագրութիւնք. Տեղակալ Ատենապետի Սինոդի՝ Երեմիա եպիսկոպոս, Անդամք՝ Գրիգորիս եպիսկոպոս, Արիստակէս (Սեդրակեան) եպիսկոպոս։ Սրբազան Գրիգորիսի ստորագրութեանը կից է հետևեալը. «ոչ ինձ բանք ինչ խօսելոյ յայտարարութեամբ»)։

ՀՍՍՀ-ՍՍՀ